

ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ուղարկոյ համար  
 Տարեկան 10 ֆր.  
 Վեցամսեայ 5 »  
 Երեսամսեակի հա-  
 մար Տարեկան 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 Անկերկայի համար  
 Տարեկան 2.50 ֆր.  
 Վեցամսեայ 1.25 »  
 ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
 —(—)  
 Իրանացեան տղոց 20 սան-  
 քիմ է. Երեմիկ աւելի ան-  
 քաններու համար 20 Օլո  
 գնդ կըլայ :

# ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նախակ և գրաս գրկի  
 Խմբագրութեան հասցիին  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoun»  
 Varna (Bulgarie)

( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )

( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )

ՊԱՏԱՆԱՆԱՏՈՒ Գ. ՍՈՒԲԻԱՍԵԱՆ

## ՊԱՏԻՃ, ՊԱՏԻՃ

Արտասահմանի հաւթիւնը մի սիրտ, մի հոգի եղած՝ ուղեց օդնել իր թշառ հայրենիքին : Ամէն կողմ միթիւնկներ կազմեցան, բողբոջախառն խնդիրներ ուղարկեցան և Պ. Չերազն էլ իբր մասնաւոր կերպով աշխատող պատիրակ նշանակեցաւ Լահէյ գնալու համար : Ազգային պարտականութիւն էր. ամէն հայ ուրախութեամբ մասնակցեց : Ամէնքն էլ ուղեցին իրենց բողբոջի ձայնը բարձրացնել, որովհետեւ գիտէին, որ Համիրտական ճիրաններ մէջ գալարուցները ոչ մի հնար չունեն ձայն հանելու : . . . Բայց գայի համար լոյսը ցանկալի չէ. ստոր դաւաճանների համար հայի մէջ ազգային եռանդ տեսնելը մահացու վէրք է : Եւ ահա Օրմանեան փաշան իր բռնակալի մի փոփոցի շնորհով ցնցուեցաւ : Դա մի փոքրիկ հեռագրով ցելի ու հայհոյանքի շերտով ծածկեց արտասահմանի բոլոր հայութիւնը : «Ճէր նախագահ, արտասահմանում եղած միթիւնկները չեն կարող պաշտօնական լինել» : Այս է Պատրիարքի հեռագրի բովանդակութիւնը : Ողորմելի՛ ուղեղ, որ կարծում է թէ աշխարհի բոլոր կառավարութիւնների ներկայացուցիչները չէին հասկանում, թէ թուրքի սրից մազապուրձ հայ ամբոյսը պաշտօնական մարմին չէ . . . Բայց վրդովեցուցիչ է Օրմանեանի այդ քայլը : Ինչ էլ որ լինի, չպէտք է թողնել նրան առանց պատժի : Մի հայ պատրիարք բողբոջում է, որ արտասահմանի հայերը աշխատել են իրենց ձեռքից եկածը անել տանջող հայրենիքի համար . . . Մի ընտրած պատրիարք ահագին թիւ հայերի ազգային ամէնատուրը զգայմունքները օտի տակ է տալիս : Պատրիարք անհրաժեշտ է : 6 տարի առաջ մի ուրիշ հրէջ էր նստած նոյն գահի վրայ :

Աչքեան էր նրա անունը : Վրդովեց հայ ժողովուրդը : Եւ ամբոյսի անարատ գրկից զուրս կկաւ մի վառվառն ու անկեղծ պատանի, մի կոշկակարի աշակերտ՝ Յակոբիկը : ատրճանակի տաք գնդակը պիտի տապալէր դաւաճան պատրիարքի զաղիր մարմինը . . . Խրաւեցէք, դաւաճան պատրիարքներ, Հայ ժողովրդի հետ մի խաղաք. նա կարող է նոր Յակոբիկներ ծնել . . . Աչքեանի օրինակը դաս չեղա՞ւ արդեօք Օրմանեան փաշային : Յակոբիկը իր կարգին, բայց մենք էլ մեր պարտքը կատարենք : Օրբազան փաշան աշխատեց խանդարել ժողովրդական ազգային ձեռնարկը՝ մենք էլ պատճենք նրան, որքան կարող ենք : Այո՛, հայ հոգեւորականի այս օրինակելի քայլը խայտառակութիւն է ամբողջ հայութեան համար : Եթէ այս անգամ չպատժենք՝ նոր ու աւելի խայտառակ քայլեր կանէ այդ փաշան : Օրինակ առնենք Վառնայում արդէն կատարուող «Նիշուրի» գաղարեցները պղծել մեր կեղեցիները Օրմանեանի վատ անունով : Գժգոհութեան, յանդիմանութեան ու բողբոջի գրեթէ գրկենք նրան : Պատժենք, այո՛, պատժենք հայութեան այդ թշնամին : ԳԱՍՊԱՐ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Լաճիկ, 21 Մայիս  
 Պ. Մինաս Չերազ տեսակցութիւններունցաւ Սաղաղութեան Վեհաժողովի անդլիացի, Քրանսացի, աւստրիացի, գերմանացի, իտալացի, ամերիկացի, պուլիար, սերպ, յոյն և պարսիկ անդամներէն ոմանց հետ և թղթակցեցաւ միւսներուն հետ : Նաեւ, Օսմանեան պատրիարկներէն զատ, ամենուն հաղորդեց հարստահարական ընդարձակ տեղեկագիրներ : Տեսակցեցաւ Վեհաժողովի պատուակալ նախագահ Պ. աբ Պոֆորի և Հօլանտական և օտար նշանաւոր անձերու հետ : Միայն նախագահ Պարոն աբ Սաալ, մերժեց ընդունիլ զայն, գուցէ չեղք մնացած ըլլալու համար, ինչպէս մերժած է ընդունիլ ուրիշ շատեր (Պէրլինի Վեհաժողովի նախագահն ալ, Պիզմարք, այսպէս վարուած էր հայ և ուրիշ պատրիարկութեանց նկատմամբ) : Պ. Չերազ իրմէ զբաւոր պատասխան խնդրեց իր ներկայած պաշտօնագիրներուն : Պ. աբ Սաալի կողմէ, Վեհաժողովի ընդհ. քարտուղարը, նախարար Վան Այս, ժխտական պատասխանադիր մը ուղղեց իրեն, որուն Պ. Չերազ պատասխանեց մի ընդարձակ նամակով, զոր բոլոր տեղական թերթերն հրատարակեցին կամ թարգմանեցին : Եւ ինչպատ ազգային դատին բազմաթիւ յօդուածներ հրատարակեց տեղական մամուլին մէջ և հրատարակել տուաւ օտար թերթերու թղթակցներուն : Իւր պաշտօնի զիւանդիտական մասն աւարտելէ յետոյ, ձեռնարկեց Օսմ. պատուիրակներու քթին տակ բանախօսութիւն մը ընել, մօզական լապսերով ցոյց տալու համար հայկական կոտորածի տեսարաններ : Թուրքան փաշա բողբոջեց Պոֆորին և իր ընկերներով Լահէյէն մեկնիլ սպանաց եթէ կատարութիւնը չարդիւէ բանախօսութիւնն և երկրէն չարտաքսէ բանախօսը : Ուսիկանութիւնը բաւականացաւ արդիւնքով բանախօսութիւնն, որ մայիս 30ին պիտի կատարուէր : Բոլոր հօլանտական թերթերը կ՛ու յօդուածներով դատապարտեցին կոտորածը թեան ընթացքը, և ոմանք Պոֆորի անկումը պահանջեցին : Նոր զիմում եղաւ ոտանկանութեան, հրաման ստանալու համար : Պ. Չերազ երէկուան թերթերով ծանոց թէ պատրաստ է ձրիպալտ երթալ բանախօսել ամէն հօլանտական քաղաք (այս պատճառաւ Լ. Ա. մէյի առաջիկայ թիւը սովորականէն ուշ պիտի հրատարակուի բնականաբար) : Թուրքան փաշա, որ հեռագրեր էր Սուլթանին թէ յաջողած է լոնցենը Պ. Չերազն և երկրէն դուրս հանել տալ, որոնք է շքանշաններ և թանկ նուէրներ բերել տալ հօլանտական նախարարներուն համար : Վեց ազգային երեսփոխաններ երէկ Պ. Չերազին խոստացան իրենց պաշտպանութիւնը և Տօքթ. Քոյպէր, որ Հօլանտայի կըստարնէ Է. ճաշի հրաւիրեց զայն, և խոստացաւ նախագահի իր բանախօսութեան : Վեհաժողովի հայասեր անդամներէն ոմանք, յայտնեցով Պ.

Չերազին թէ անհնար է որ ժողովը հայկական խնդրով զբաղի, խորհուրդ տուեր են իրեն որ կրցածին չափ ազմուկ հանէ, ջլատելու համար այն պետութեանց ճիգերն որոնք կը նկրտին խնդրել հայկական խնդրին : Իր օրինակէն քաջալերուած, Երիտասարդ-Թուրքիայ կուսակցութեան և Մակետոնիոյ յոյներէն ալ ներկայացուցիչներ եկած են հոս, «բարեխնամ» կոտորածութեան զէմ մաքառելու համար : Պ. Չերազ տեսակցեցաւ նաեւ հանրածանօթ Պ. Սգէտի հետ, որ Չարին հետ տեսակցելէ յետոյ հոս եկած է : Պ. Սգէտ ըսեր է իրեն. «Չերազային յաղթանակը Ռուսիոյ և Անգլիոյ համաձայնութեան կախում ունի. այս համաձայնութիւն անկարելի չէ : Յայս չը կայ որ Անգլիա և Ռուսիայ հայկական խնդրով զբաղին այս սարի, այլ համոզուած եմ թէ զալ տարի պիտի զբաղին անպատճառ» : Z

Արիստակերտ, 14 Մայիս  
 ՍԵՐ ՄԻԹԵՆԿԸ

Կարծեմ անակնկալ չպիտի թուի, եթէ յայտնեմ թէ եղիպատոս ալ ունեցաւ իր միթիւնկները : Որովհետեւ ազգային գործունէութեան տեսակէտով որչափ ալ տխուր ըլլայ համբաւը եղիպատոսին, որ հայութեան համար կը մնայ միշտ հին անապատը՝ միթիւնկ մը մեծ ծախքի չի կարօտիր : Ժողովրդական ձեռնարկութիւն մըն է, որ առանց ջնջելու աշակցութեան ալ կրնայ կատարուիլ : Իսկ այս երկու երջանիկ պայմանները բաւական են գործի մը յաջողութիւնը հաւանական ընծայելու՝ մինչեւ անգամ եղիպատոսի մէջ : Այսու հանգեք՝ քիչ ժամանակ ու փոքր ջանք հարկ չեղաւ այդ հաւանականութիւնը իրականութեան հասցնելու : զրեթէ ամիս մը առաջ տեղույս Դաշնակցական և Հնչակեան մարմինները համբար յալութեամբ՝ սկսած էին ծրագրերն իրականել, գիւմուսներ ընել, ու այս ժամանակ կամիջոցին մէջ գործը հազար կերպարանափոխութիւններ կրելէ և քանի մը անգամներ ալ ձախուղելու վտանգէն ազատելէ ետքը՝ վերջապէս իրականութիւն գտաւ մայիս 3 կիրակի օր : Արդէն նախորդ օրու ընէ՛ կար-

զագիր մասնախումբին կողմէ տպուած հրատարակութեանը ցրուած էին հասարակութեան հրատարակութեանը ամէն պարտաճանաչ հայ գալ մասնակցի ազգային հաւաքումին, և երկու տեւած 500 հոգի հաւաքուեցան Երեւանին, ուր պատարագի աւարտումէն ետքը տեղի ունեցաւ միթիւնիւր նախ կարգադիր մասնախումբին կողմէ առաջարկուեցաւ ընտրել նախագահ մը ու քարտուղար մը և միահամուռ ծափահարութեամբ ընտրուեցան Պ. Միհրան Գալֆայեան նախագահ և Թադ. Խորհուրդի անդամներէն Պ. Ալեքսան Ժէվահիրեան՝ քարտուղար :

Պ. Նախագահը կրկին ծափահարութիւններու մէջ խօսք առնելով նախ շնորհակալութիւն յայտնեց իր ընտրութեան համար և համառօտակի բացատրելէ ետքը միթիւնիւն նպատակը խօսողները հրատարակեց : Առաջին տեսնարանը եղաւ ազգային վարժարանին ուսուցիչներէն Պ. Յակոբ Ալախչեան, որ ազգու և գեղեցիկ ճառով մը բացատրեց Լահէի դեպքանախորհուրդին շարժառիթները և մեր գաղտնի ունեցած անհաշիւ թիւերը անոր նպատակին հետ : «Շարժում» ընթացողները անշուշտ գոհունակութեամբ պիտի կարգան՝ ժողովականներէն բուռն ծափահարութեամբ ընդունուած այդ ճառը, որու պատճէնը կը զրկեմ ձեզ հրատարակութեան համար : Յաջորդեց հանրածանօթ յեղափոխական գործիչ Պ. Միհրան Տամատեան, որ ընդարձակ ճառով մը, զոր կարգաց յուզուած շեշտերով, բերկրութիւն յայտնեց՝ այս պարագայիս արտասահմանի բոլոր հայ գաղութներուն մէջ երեւան եկած ազգային համերաշխութեան, գիտակցութեան ու պարտաճանաչ

չութեան համար և շեշտեց թէ զգացումներու զուգահեռութեամբ մը ամէն տեղ կազմակերպուած այս միթիւնիւնը, ամէն կողմէ խաղաղութեան Կեանքաժողովին ուղղուած նոյնօրինակ գիտումները կը ցուցնեն որ հայկական խնդիրը մէկ քանի հայերու կողմէ սարքուած խաղ մը չէ, այլ մեր ժողովուրդի վիճակին ճակատագրական հետեւութիւնն է : Երկարօրէն պարզեց հայրենիքին պահանջները, միթիւնիւն նպատակը ու անկէ ակնկալուած անմիջական կամ անուղղակի արգելաբանները : յորդորեց որ համաձայնութեամբ ընդունին քուէարկուելիք որոշման գիրքը և այս առթիւ համերաշխու միահամուռ գործունէութեան բարիքները մասնախումբին ընդէ ետքը աւարտեց «Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ ողբերգալ ու կենդանի հայութիւնը» բացառապէս թիւերով, զոր խանդավառ ծափահարութիւններով կրկնեց բազմութիւնը :

Յետոյ նախագահը կարգաց զիմումի հետեւեալ բանաձեւը, որ ձեռնարկած քուէով միահայն հաւանութեամբ ընդունուելով՝ որոշուեցաւ անմիջապէս հեռագրել Լահէի դեպքանախորհուրդին նախագահին և վեց մեծ պետութիւններու ու Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւններուն :

«Ալեքսանդրիայի հայ գաղութականութիւնը արտակարգ միթիւնի գումարելով՝ Կեանքաժողովին միջամտութիւնը կը հայցէ՛ Հայաստանի մէջ խաղաղութիւն հաստատելու եւրոպական պետութիւններու հսկողութեան ներքեւ :

Պարագային յարմար քանի մը խօսքով ու պահպանիչով մը ժո-

ղովը փակեց Արժ. Գանիէլ Ծ. վարդապետ և նախագահին յայտարարութեան համաձայն եկեղեցւոյ դրան առջեւ պնակ բռնուեցաւ՝ ի նպատակ ժողովին որոշումներուն գործադրութեան : Անկարելի էր չյուզուիլ հոն տեսնելով այն աղքատիկ գաղթականները, որոնք սրտեռանդ փութկոտութեամբ մը իրենց քսակները կը պարպէին պնակին մէջ, որու հասոյթը 8 անգլ. ոսկի եղաւ, և պակասն ալ մասնախումբին անդամներուն կողմէ առ հաշիւ լրացուելով՝ հեռագրիւնները միթիւնիւն անմիջապէս ետքը սրտեցան :

Որչափ ալ փափաքէինք ազգային այս համախմբումին նկարագրութեան բերկրայի տպաւորութիւնը չթմրեցնել, չենք կրնար սակայն չչոյնիլ մեր ջոշնորուն և նոյն իսկ ժողովուրդին քուէով ընտրուած՝ պաշտօնական մարմիններուն՝ պատմական ընթացքը, որ այս պարագային ալ յատնուեցաւ :

Ջոշերը իրենց բացակայութեամբ կը փայլէին, իսկ թաղխորհուրդը, որ հակառակ իր դիտաւորութեան չէր համարձակած՝ միթիւնիւն եկեղեցւոյ մէջ գումարումը արգելել՝ ետքը իր ամբողջ զայրոյթը թափեց է իր անդամներէն խեղճ ձէվահիրեանի գլխուն, որ այդ տեսակ հաւաքումի մը ներկայ գտնուելու մեղքը և քարտուղարութիւնը, ընդունելու ոճիրը գործած էր : Եւ պէտք է գիտնալ որ ասոնց մէջ ինքզինքնին յեղափոխական դաւանողներ ալ կան . . . :

ԿԱՐԻՃ  
Յ. Գ. — Գահիրէի միթիւնիւնը, որու մասին զեռ մանրամասնութիւններ չենք ստացած, տեղի ունեցած է նոյն օրը՝ 600 հոգիի մասնակցութեամբ և աւելի մեծ յաջողութիւն գտած :

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն**

**Ա Լ Ե Ք Ա Ն Դ Ի Ռ Ո Ց Մ Ե Թ Ի Ն Կ Ի Ն Մ Է Ջ Խ Յ Ո Ւ Մ Ը Ճ Ա Ս Ե Ր Է Ն Մ Է Կ Ը**

**Հայրենակիցներ :**

Մէկ քանի ամիսներէ ի վեր Ռուսաստանի Ջարին կողմէ արձակուած Ջինաթափութեան հրաւերը ամբողջ քաղաքակիրթ աշխարհին մէջ մեծ յուզում յառաջ բերած է ամէն կողմէ թագակիր գլուխներ իրենց ամենաջերմ համակրանքը կը յայտնեն այդ հրաւերին ու ժողովրդներ միթիւնիւններով ու հանրագրութիւններով նուիրագործել կը փորձեն խաղաղութեան սկզբունքը :

Առաջին քայլը որ պիտի ընէ եւրոպան շեղելու համար այն ճամբէն որուն վերջը քարոյական ու նիւթական մեծ անկում մը պատրաստուած էր իրեն՝ փառքի տիրոջնեան մէկը պիտի ըլլայ 19րդ դարուն : Ինչ որ ալ ըլլան այն յետին մտքերը որ գոյութիւն ունեցած ըլլալ կը կարծուին այդ գաղափարը զացողներուն քով կայ սակայն

չափ պարզ իրողութիւն մը. մարդկութիւնը կը համոզուի աստիճանաբար թէ իրենու այս վիճակը չի կրնար շարունակուիլ : 20րդ դարու շէմին վրայ և քաղաքակրթութեան ու մարդասպանութեան գաղափարները չեն կրնար հաշտ երթալ իրարու հետ եւ Լահէի ժողովականները ստիպուած պիտի խորհին այն միլիոններուն վրայ, որոնք ժողովուրդներու արիւն քրտինքով վաստակուած ժողովուրդներ բնաջինջ ընելու միջոցները կատարելագործելու կը ծառայեն :

Վերջին երեսուն տարիներու շրջանին մէջ շահը միակ առանցքը եղած է ամէն գործունէութեան : ամէն խնդիր շահու տեսակէտներով կը քննուին ու կը լուծուին. երկրակալութեան անյաջ փափաքները հետզհետէ կը սրցնեն թշնամութիւնը եւրոպական ժողովրդներու մէջ և յառաջ կը բարեն բիրտ ուժին տիրապետումը : Այս ժամանակամիջոցին մէջ ապրող պետական մարդերու խումբ մը նահանգ քաղաքակիրթ ժողովրդներու ուսին վրայ ծանր գուռա մը որ զինուորականութիւն կը կոչուի եւ որուն ծանրութեան տակ պղակները կը ճգմուին ու մեծերը

կը զողան : Եւրոպան իր ամբողջութեանը մէջ այսօր սուրիներու դաշտ մը եղած է, ժողովրդները արթնուն քանակներ և պայքար պատերազմին արհաւիրքները ցաւազին մղձաւանջը պատրաստած են բարոյական ու մտաւորական աշխարհներուն : այն երկիրները որոնք զիրար հասկնալու, զիրար ճանչնալու ու զիրար ամբողջացնելու կոչումը ունէին, ընդհակառակը՝ զիրար ջարդելու բարբարոսական գործին կը պատրաստուին տենդոտ :

Պատերազմը խումբ մը մարդերու համար, որոնք փոքրամասնութիւն չեն կազմել՝ նուիրական բան մը եղած է. սրբացուցած, աստուածացուցած են զայն և մինչև անգամ եղած են այնպիսիներ, որոնք պատերազմը յառաջդիմութեան անհրաժեշտ պայմանը ըրած են. աւելորդ է ըսել թէ այդ յառաջդիմութիւնը անոնց համար կը կայանար քաղաքներ թնամութիւն բերան տալու, արդասարիք զաշտիք ոտոզելու անմեղ արիւնով, ու հազարաւոր կտրիճներ գնդակի անձրեւներու տակ ծածկելուն մէջ :

Այս սարսափները սակայն ծանօթ են ամէն անոնց, որոնք ազգերու

«Եւրոպայի Պաղեստինա մըն է» : Մայիս 16ին սոյն վերնագրով ուսանողականաց կողմէն «հակա հրէական» ազդեր փակցուած էին, որոնց մէջ ուսանողական մարմինը հրաւեր կը կարգար իր Ռուսիոյ եղբարց, որ քարերով, փայտերով զինուորին և զինին Ռուսերէն քուսուած հրապարակը, ուր տեղի պիտի ունենայ «հակա հրէական» ժողովք մը :

Ժամը 10ին քաղաքիս արուարձաններէն մեծ ու պզտիկ գիւղացիք՝ Ապախի Համիսին հնարած գաւազաններով զինուած, գուռագուռեղ քաղաքս լեցուցելով, զինեցին Ռուսերէն հրապարակը, որ տեղի ունեցաւ Ռուսաց ժողովը Միտոլի սրահին մէջ : Ժողովին մէջ ճառեր արտասանուեցան, ճառախօսք կըսէին թէ Միտոլիան կատարեալ Հրէաստան մը գործած է. ամէնայն ինչ հրէից ձեռքն է եւ երթալով կը տիրեն անոնք մեր երկրին, եւ կը յորդորէին ժողովուրդը, որ այս շարեաց առջեւ տանեն : Որոշեցին որ ցոյց մը ընեն :

Վերջապէս ժողովի որոշումին համեմատ, երեկոյան ժամը 11ին սկսաւ ցոյցը : Չորս հինգ հարիւր ուսանող, ունենալով իրեն հետ վեց հազարի չափ զիւզացիներ, որ զինուած էին փայտերով, բոլոր հրապարակները, փողոցները շրջապանելով կաղաղակէին. «Կորչին հրեայք երկրէն» : ուսանողով սկսան ջարդ ու փուրթ ընիլ ստանալուն ու խանութիւններու պատահանները և զոները : կատարեալ աւերութիւն կը տիրէր քաղաքին մէջ : Հանդիպած հրեայն գաւազանի հարուածներով գետին կը տապալէին : Ջիւուոր զինուորներ հասնելով սկսան սուրիներով ամբար ցրուել, սակայն ասով աւելի վէշ ըրին, զի խուժանը կատաղաբար «մատնիչներ», վատեր, հրէից պաշտպաններ» պոստով, բարկութիւնը զորաց վրայ թափեց : Երամանատար վրանցի եւ ոստիկանապետ Բրուն ծանր վէրքեր ստացան : Կան նաեւ բաւական վիրաւոր զինուորներ :

Ինչ՞զ հրեայներ, անի զողի մէջ են. տուներնին փակուած, զուրս չեն ելներ :  
Ա. Ե. Ե.

ճակատագիրը վարելու կոչումը ունին եւ սակայն վայրկեան մը իսկ չեն դադար մարդասպանի բնազդները գործադրելու ամբարին մէջ : Ապանիոյ խնամակալ թագուհին երբ ասկէ մէկ ու կէս տարի առաջ մեկ կողմէ Միացեալ Նահանգներու զէմ պատերազմ կը հրատարակէր, միւս կողմէ սակայն չէր կրնար իր արցունքները զսպել ի տես այն կարիճներուն, որոնք իր պալատին առջեւ վերջին զորահանգներ կը կատարէին ու յաջորդ օրն ալ պիտի մեկնէին զէպի Գուպա, ուր Ասլանտեանի անդունդներուն, Գուպայի մայրաքաղաքներուն ու լեռներուն մէջ իրենց գերեզմանները պիտի գտնային :

Յարասիւ սպառազինութիւնները, տենդոտ աշխատութիւնները իրենց ծաղաղուն տատիճանին հասնելու վերջը՝ յառաջ բերին մտքերու յեղաշրջում մը. համերաշխութեան գաղափարը, որ ֆրանսոս-գերման պատերազմէն ի վեր թմրած կը մնար, յանկարծ կը վերակենդանանայ ժողովրդները իրենց վրայ ճնշող ծանր բեռներէն կուզեն ազատիլ : Ազգատու թիւեր, խեղճութիւնը ծնունդ կուտան ընկերվարութեան ու կարգ մը ծայրայեղ վարդապետութիւններ :

ԼԱՏԷԻ ՎԵՆԱԺՈՂՈՎԻՆ ՇՈՒՐՁԸ

Լատէի «Հէթ-Պատերազան» կը հարգորդէ .

«Պ. Չերազ Խաղաղութեան Ժողովի նախագահին ներկայացուցեր է խնդրագիր մը հայոց հարցին վերաբերող, յիշատակագիր մը՝ որ կը պարունակէ իր մէջ վերջին ժամանակներու հայ երկրի մէջ գործադրուած գաղանթութիւնները, և հազարն քանակութեամբ սօքիւմաններ՝ որոնցմով իր հայրենակիցները կը հրատարակեն զանի ընտրած ըլլալին ժողովին քով հայոց հարցը պաշտպանելու համար: Այս թուղթերը ներկայացնելէ ետքը մեր հայ պաշտօնակիցը ամբողջ շարքով մը սպասեց իր դիմումին պատասխան մը ստանալու համար:

Չի կրնալով անսուղի Պ. Ստալի հետ, որ յայտնած էր թէ իրեն համար բացարձակ անհնար է զանի ընդունիլ. Պ. Չերազ նորին Կերազանցութեան նամակ մը գրած էր մայիս 12ին՝ խնդրելով գէթ «մէկ բառով պատասխան մը» ժողովի նախագահը պատուիրելու էր զլիստոբ քարտուղար Պ. Վան Այրին նամակ մը գրել Պ. Չերազին. այդ նամակին հայ խմբագիրը պարտաւորութիւն համարեց պատասխանել քիչ մը կծու կերպով: Ահա այդ կարեւոր թղթ-թակցութեան պատճէնը:

Պարոն .

Համաձայն հրամանին Բազ. Ժողովի նախագահի, որ ստացեր է ձեր մայիս 12ի նամակը, պատիւ ունիմ ձեզ ծանուցանելու որ, ժողովի խորհրդածութեան քաղաքական բոլոր հարցերը հեռացուած ըլլալով և ոչ մէկ պատասխան ձեզի կրնայ տրուիլ այն պաշտօնի վերաբերութեամբ, զոր

զուր կրօնք իրը թէ ստացած էք Պուլկարիոյ, Տգիպտոսի և այլ անդերու Հայ Բազմութեան կողմէ: Հաճեցէք. Պարոն, ընդունիլ ամէնախորին յարգանացս հաւատարիքը:

Յ. ՎԱՆ-ԱՅՍ

Ընդհ. Բարս. Խաղ. Ժողովի

Այդ նամակի պատասխանը .

Պ. Ընդհ. Բարտուղար .

Պատիւ ունեցայ ստանալու ձեր երէկեան թուակիր նամակը, և շնորհակալութիւնս կը յայտնեմ նորին Կերազանցութեան Խաղ. Ժողովի Պ. Նախագահին, որ պատասխանեց իմ մայիս 12 նամակին:

Թէեւ նորին Կերազանցութեան պատասխանը բացասական է, այնուամէնայնիս ես կշտապեմ զանի հարցը Վառնայի, Պուրկազի, Տումլաի, Սլիվէնի, Սիւրիտրէի, Բատնա-Մահլէի, Ստարա-Չախորայի, Եամպուի, Հասքովի, Սիւրաբաի, Պորիսովկրասի, Բարսաբենարի, Բայազէրի, Կոփո-Չախորայի, Բէքմէնլիի, Չիրբանի, Այոսուի, Հարմանլիի, Թըրնովա-Սէյմէնի, Բառնապատի և Տայրիչի Հայ Բազմութեան, որոնց իսկական սօքիւմանները հայոց հարցի և իմ պաշտօնիս վերաբերութեամբ սուած եմ իմ ձեռքով, խնդրագրով մը և ընդարձակ յիշատակագրով մը մէկտեղ, ժողովի պաշտօնադրոյ ծառայութեան գլխաւորին՝ մայիս 6ին ժողովի բացումէն ժամ մը առաջ, փակ ծրարով մը «նորին Կերազանցութեան Խաղ. Ժողովի Պ. Նախագահին» հասցեով: Ասկէ ետքը ես անկեղծութիւն ստացայ, որ Պիլիպէի Հայ Բազմութիւն ևս մեծ միջոցով մըն է ունեցեր և հայոց հարցի ու իմ պաշտօնի վեր-

աբերութեամբ նման որոշումներ է կայացուցեր. ներքակ հեռագիրը կը ցուցնէ, որ նոյն որոշումները ընդունուած են և Գահիրէի Հայ Բազմութի միջոցով մէջ: Բայց այս որոշումները միջոցով կը բերուեն կողմէն հարցուներ և ուղղակի բարձր երազանք պետութիւններու և Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւններուն, նոյնպէս և Խաղ. Ժողովի նախագահին: Ուրեմն ես իրաւունք ունիմ պնդելու, որ ես պաշտօնաւորուած եմ ներկայացնելու հոս Ի. Գրան հաղարար հայ հպատակները:

Այս մանրամասնութեան վրայ ես այլ ես չեմ ծանրանար, երբ ժողովը վճարէ արգէն իր խորհրդածութիւններէն դուրս նետել հայկական հարցը, զոր կը դիտէ իրը զոտ քաղաքական խնդիր մը, այնինչ զիս դրկողներու համար անկա մարդկայնութեան և խաղաղացման խնդիր մըն է: Խոնարհելով ժողովի որոշման առաջ, չեմ կարող չի յայտնել, որ հայկական շարգերէն ճողպարածները երբէք պէտք չէ մոռնան որ Պետութիւնները յաճախակի և հանդիսաւոր պարտաւորութիւններ են յանձն առեր Հայաստանի քրիստոնեաներու վիճակը բարձրելու համար, որ իսկապէս ապրելու իրաւունքէն աւելի բան մը չեն ուզեր: Բայց Պետութիւնները, փոխանակ վերջ մը դնելու մինչեւ երկինք բողոքող այդպիսի անարդարութեան մը, որ խիստ դուրին էր վերացնել թոյլ տուին Սուլթանին թաղիքը, զոր իրենք, Պետութիւնները ստիպեր էին ընդունել Սասունի շարգերէն ետքը. այո՛, Պետութիւնները թողին,

որ Սուլթանը 300,000 հայ և հայուհի նահատակներու արեւան մէջ խեղդէ այդ ծրարիքը . . . մէկ կողմ թողին ուրիշ ծրարիք մըն ալ, զոր Պոլսոյ գեապաւնաւորներու խորհրդատրութեան մէջ կը մշակէին իրենց ներկայացուցիչները յունարքական պատեւրաղմէն քիչ մը առաջ: Հայերը չեն մոռնալու երբէք որ այդ Պետութիւնները, երբ մէկ կողմէն կը գաղտապարտէին ամէն անտանելի ճնշումներու շնորհով դէպի պատամուտ թիւն մղուած հայերու մէկ մասին յուսահատական գործերը, միւս կողմէն անարբել մնացին արեւելեան ցեղերէն ամենէն խաղաղասէր ազգի դահիճներու ստոր գաւաճանութիւններու հանդէպ, քրիստոնեայ հին ազգի մը պարբերական ջնջման հանդէպ, այն ազգին՝ որու պաշտպանութիւնը իրենք առած էին իրենց վրայ թէ՛ Բարիդի, թէ՛ Սան-Սթէֆանօի, թէ՛ Պետլինի և թէ՛ Կիպրոսի գաշնագիրներով: Հայաստան, երազական ետական դիւանագիտութեան այդ զոհը, միշտ իր ձայնը պիտի բարձրացնէ անոր յիշեցնելու իր խոստումները. ինչպէս Աւետարանի առակի այրի կինը՝ նա երբէք պէտք չէ զազրի իր գաղտնորը ձանձրացնելէ, մինչեւ որ արդարութիւն գտնէ:

Հաճեցէք, Պ. Ընդհ. Կառնադպիր. ընդունիլ խորին յարգանացս հաւատարիքը:

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ

Լատէի մեր թղթակցի Հաղարգած լուրը Պ. Չ.ի գօնֆէրանսի մասին աւելի մանրամասնօրէն հարցողելով «Թան» կաւելցունէ. «ասիկա խիստ մեծ միջադէպ մըն է: Արդիւումս գօնֆէրանսը այնուամէնայնիս անզի

րու, որոնք ինչպէս անցեալին նոյնպէս և ներկային մէջ մեծ վտանգներ կը պատրաստեն ամենազօրեղ կուսակցութիւններու դէմ իսկ:

Տիրապետող բռնապետական դրութիւններու գէմ բողոքները կը շատնան և և մարդիկ իրենց ազատագրութիւնը կը պահանջեն. երբ ժողովուրդ մը իր իրաւունքները կը պահանջէ, ամենամեծ բռնակները, ամենակտրող սազմազաններն ու բռնապետները բան մը չեն կրնար ընել այն վիթխարի ուժին դէմ:

Արիւնատ յաղթանակներու վրայ հիմնուած շէնքերը սարկներու բնութեան մէջ կը ճեղգուին, կը փտան և անազին շտապով մը կը կործանին. Բարսաբէն, Աննիթալ, Պիլիպէի պատուար աստղերն են մարդկութեան, որոնք որոշ ժամանակ մը փայլելէ, ժողովրդները չլսեցնելէ վերջը՝ յանկարծ կը կորստին իրենց ետեւէն ոչինչ չի ձգելով. բարոյական յաղթանակները, մտաւորական աշխարհին աշխարհակալութիւններն են, որ գարեբը ճեղգելով կանցնին իրենց վրայ յաւիտենականին կնիքը կրելով միշտ ու բարութիւնը կը մնայ իսկալը մարդկութեան. մեծ սիրտերը միշտ հոն կը գիտեն ան-

սայթաք. վստահ իրենց վերջնական յաղթանակին:

Անգլիացի ձեռն ձերուսին, որ իր կենդանութեանը յաջողած էր իր երկրին շահերը հաշտեցնել ամբողջ մարդկութեան շահերուն հետ և միւրիւրներու սակ թաղուած Յունաստաններու, Իտալիաներու, Իռլանդաւորներու սպասութեան ծամբան հարթած էր՝ հողեղբարի վայրկեաններուն իր յոգնած ձայնովը սակապը կընէր մարդկութեան. «բարութիւն, բարութիւն, բարութիւն, միշտ և ամէն սեղ բարութիւն»:

Հայրենակիցներ, հայութիւնը իր գոյութեան ամբողջ շրջանին մէջ միշտ խաղաղութիւնը ցանկացած է և ամէն սուսակ սարսափներու մէջ իսկ աշխատած է չի չեղիլ այդ ուղղութիւնէն. բայց վերջին քսան տարիներու դէպքերը զինքը նետած են ուրիշ ճամբու մէջ. սեռական խաղաղութիւն քոյրութիւն չի կրնար ունալ երբէք հոն, ուր բարբարոսութիւնն ու բռնութիւնը չափ ու սահման չունին և մարդկային ամէն ազնիւ զգացում անարգ կամայականութիւններու զոհ ըլլալը պատապարտուած են. հայ ժողովուրդը հինգ հարիւր երկար սարկներու

համբերութեանն ետքը երբ իր մարդկային իրաւունքները խնդրեց իր տիրապետներէն, անոնք բարբարոսութիւններով պատասխանեցին իրեն ու երբ երազայի դիմեց՝ ան ալ մէկ քանի պարագաներու մէջ անոր իրաւունքները ճանչնալէ վերջը անզոյս զիսեց հայութեան չարարանքի կեանքը. սարսափներու ու արհաւիրքներու զոհաբեր մէջ ու իր քար խլութեամբը կոտորածներէ ու սովէ տանջուողներու աղկաւոր աղաղակներն իսկ չի լսեց:

Եթէ հայ ժողովուրդը իր խնդրանքներէն վերջը նետեցաւ կրակի ծամբուն մէջ, արդէն ազատութեան ձգտող ամէն ազգերու վերջին ապաւէնը եղած է այդ սխեւելով Յունաստանէն մինչեւ Կրէտէ, և մեր բարձր գոհողութիւնները այդ ծամբուն մէջ ցուցուցին թէ հայը արժանի է այն ազատ կեանքին որուն կը ցանկայ:

Տարիներէ ի վեր Արեւելքի մէջ հեղափոխութեան հարկները դիւանագիտութեան համար ստեղծեցին յաւիտենական խնդիր մը ու հայկական հարցին ալ միշտ բաց վերքը մնաց «հիւանդ մարդու» կշարն վրայ: Հայրենակիցներ, հիմա որ երբ-

պական կատարութիւններն ու ժողովրդները ձեռք ձեռքի սուած կը փոխեն չափ մը դնել ուժեղ սպասուղիւններու ու կը ջանան խաղաղութեան սպասուցող խնդիրները լուծել համբարախտութեամբ՝ մենք ալ բարձրացնենք մեր ձայնը, զի մենք մենք ալ Լատէի ժողովականներուն և անոնց ուղղութիւնը հրաւիրենք հայկական հարցին վրայ, որ իր քաղաքական ծանրակշիռ բնութեամբը աշխարհի խաղաղութիւնը վտանգող ամենամեծ խնդիրներէն մէկն է այսօր:

Մեր համակրութիւնները յայտնուէ վերջը Լատէի խաղաղութեան համաժողովին, մաղթենք որ 19րդ դարու մեծ մարդուն, Կլաւտիոսի կատակը նշանաբանը ըլլալու Լատէի ժողովականներուն. «բարութիւն, բարութիւն, բարութիւն, միշտ և ամէն սեղ բարութիւն»:

Ա.ՂԱՍԷՐ

Աղեխաճերխա, 9, Մայիս 99

— — — — —

կունենայ և Պ. Պօֆօրի(արտաքին գործոց նախարար) գրութիւնը, որ արդէն խախտած է, աւելի եւս կը վտանգուի թուրք կառավարութեան ըրած զիջումներուն պատճառով:

— «Րայիս Պօղոսի կը հեռագրեն Պօլսէ. «Հոս կըսուի թէ Ռուս կառավարութիւնը Եւրոպ. քէօշքի դիմում է ըրեր և յայտնել, որ Լահէյի ժողովի թուրք պատուիրակները չունենան այնպիսի պատրաստ ծրագիրներ, որոնք ծանրացնեն ժողովի զբաղմունքները:

— Խնդրագրեր, ծրագրեր և այլ գործերն եկած թուղթեր քննելու համար նշանակուած յատուկ յանձնախումբը ժողով ըրաւ Տ. Քարնըպիքի նախագահութեամբ: Այս ժողովը միաձայն վճռեց խուսափել այն ամէն խնդիրներէն, որոնք խաղաղութեան ժողովի անմիջական նպատակէն դուրս են:

— Վերջերս եկած մասնաւոր և ձեռնհաս նամակէ մը կիմանանք, որ Պ. Չերազի գօնֆէրանսի արգիլումը խիստ մեծ իրարանցում է առաջ բերել: Նախարարութիւնը, ճնշուելով թուրք ներկայացուցիչներու պահանջներէն, կուզէ արտաքսել Պ. Չերազը իբր խռովարար. ընդդիմադիր կուսակցութիւնը զօրաւոր պաշտպան կը հանդիսանայ բռնաբարուող անհատական ազատութեան և այդ փաստը կը ծառայեցնէ արիւղ կուսակցութեան դէմ իբր զէնք: Իսկ թուրք պատուիրակները կը սպառնան մեկնիլ, եթէ Չերազ չարտաքսուի: Արեւմտ. կամ Պ. Չերազի արտաքսումը, կամ թուրք խան փաշայի մեկնումը և կամ հօլանտական նախարարութեան անկումը այս է ներկայ վայրկեանը: Տեսնենք որ վճիռը կընդունէ 2—3 դար հալածուածները ապաստանող, սպառ միտքն ու խօսքը պատասխանող Լահէյ քաղաքը և հօլանտական ազատասէր ժողովուրդը:

— «Սթանտարտ կը հաղորդէ. Հօլանտական խորհրդարանի եւրոպիական Տօքթ. Գուրբէրի և Պ. Լիֆօդինքի միջամտութեան շնորհով Պ. Մ. Չերազ պիտի ընէ իր դասախօսութիւնը Հայաստանի և Հայերու մասին Ամսթերտամի մէջ: Տ. Քուրթըր հակայիզափոխական ձախակողմններու պետ է, իսկ Տ. Լիֆօդինք յառաջդիմասէր աղաւտական մըն է:

Գործի այս տեսակ լուծումը լսելով թուրք պատուիրակները պէտք է որ խիստ գէշ զգան ինքզինքնին:

Իսկ Տ. Պօֆօն, որ նոր ստացաւ Օսմանիէի առաջին կարգի պատուանշանը՝ աւելի և աւելի ծանր գրութեան մը մէջ կիյնայ:

—)(—

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

#### ԶԸ ՅԻՇՈՒԻ

Հինգշաբթի, Համբարձման տօնին օրը, պատարագի արարողութեան առեւ՝ ժողովրդի բողոքով Պատրիարքի անուան յիշատակութիւնը արգիլուեցաւ քաղաքիս եկեղեցիին մէջը:

Այսպէս ուրեմն առաջին օրինակը Վառնան տուաւ: Տեսնենք միւս հայաբնակ տեղերն ինչ պիտի ընեն:

— Գամելլօ Մօրկան անուն անձ մը, որ կը կրէ «Նորին Արքայական Բարձրութեան Իշխան Գուխտօն Լուսինեանի գաղանի խորհրդակալ և իրող բաղմաթիւ շքանշաններու» երկար ատղոսը, «Հայոց հարցը, Լուսինեաններու արքայական տունը և անոր պատուանշանները և շքանշանները» խորագրով գրքոյկ մըն է հրատարակելու Յիւրիսի մէջ այս վերջին օրերս: Գրքոյկը մեր ձեռքն անցաւ մեր բարեկամներէն մէկի շնորհով: Կը շարժանք որ մարդիկ առանկ կատակերգութիւններու համար գրամներ կը վատեն, երբ այն կողմ ժողովուրդ մը կը կոտորուի սովէն ու զէնքի պակասութենէն:

— Հայ քանդակագործ Տ. Ա. Տէր-Մարութեան Բարիզի «Սալօնի» մէջ իցոյց դրած է իր մէկ գործը՝ «մուսան» (մերկ կին մը), որուն բոլորտիքը կը գտնուին այս դարուս բոլոր հայ անուանի մատենագիրները. մուսան անոնց պակ կընծայէ:

— Կիրակի, Մայիս 16ին Թիֆլիզի մէջ կատարուել է Արեւելեան հայ աշխարհիկ գրական նութեան հիմնադիրներէն մէկի՝ Պ. Պերճ Պոչեանցի գրական գործունէութեան 40 ամեայ յոբելեանը: Տ. Պոչեանց ուսուս. հայերու ամէնահին վիպագիրներէն մին է: Խաչատուր Աբովեանէ ետքը Պոչեանց իր վէպերով շարունակեց աշխարհիկ լեզուի մշակութիւնը և դաւառական, գեղջկական կենցաղը ուսումնասիրեց: Անոր անուանի վէպերը սկիզբը գրին գաւառական կեանքի ուսումնասիրութեան, միանալով Ղազարոս Աղայեանցի «Յարութիւն և Մանուէլ» վէպին հետ:

Պոչեանցի գլխաւոր գրութիւնները, որ անոր իսկական արժէքը կը ցուցնեն՝ հետեւեալներն են. «Սօս և Վարդիթեր», «Կուռածաղիկ», «Հայի խնդիր» և «Շահէն», իսկ նոր գրութիւններէն յիշատակութեան արժանի է միայն «Բլղէն»:

— «Թայմզ»ի Կ. Պօլսոյ թղթակիցը կը հեռագրէ Մայիս 31 թուականով:

Բերնաշէնի (Սառուն) հայոց վանքին վանահայրը սպաննուել է քիւրսերէն:

—)(—

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կը խնդրենք որ հաճիք հրատարակել ձեր յառաջիկայ թերթին մէջ ի նպաստ Հայաստանի սովեալներուն Վառնայի մէջ կազմակերպուած թատերական երեկոյթին ներկայ հաշիւը:

Ֆր.Մն.	
Տոմսերէ գոյացած	632.—
Ձանազան նուէր	29.50
	661.50

Այս գումարէն ծախսուած է՝

Թատրոնի վարձք	50.—
Նուագածուներու	16.—
Տպագրութեան	15.—
Թատերախաղի հեղինակին վարձք	15.—
Հաղաստի, զէնքի և այլնի	35.—
Բեմական զանազան ծախսեր	24.25
	155.50

Դեռ կայ 60 ֆրանք ապառիկ զոր հետզհետէ պիտի հաւաքենք. իսկ իբրեւ զուտ հասոյթ պատրաստ գրամ կը գտնուի 446 ֆր. և 25 սանթիմ զոր յառաջիկայ կիրակի օր ճամբայ կը հանենք Կ. Պօլիս Ազգ. Պատրիարքարան, նպատակին յատկացնելու համար:

Արդ, շնորհակալ ըլլալով ամէն անոնց որոնց սիրաւը քարէ չէր և որք մեր սովատանջ եղբայրներուն պատառ մը հաց հասցնելու նուիրական այս ձեռնարկին օժանդակեցին իրենց գրամովը և աշխատութիւնովը, որոնց մէջ կը հանկուցուի նաեւ ներկայացումը անձնուիրաբար սարքող գերուսանական խումբը, ցաւօք կը յայտնենք որ գտնուեցան դեռ մեր մէջ այնպիսիներ որոնք իսպառ մերժեցին ուր 10 փարայ անգամ և նոյն իսկ գտնուեցան ալ որ անորակելի հակառակութիւն մը յարուցին գործը կազմակերպութեան համար և իրենց այս ընթացքէն չամչցան:

Այդպիսիներն ալ չէն կենան ուրեմն (.):

Ի դիմաց մասնախումբի Յ. Փալազեան

Վառնա, 27 Մայիս 1899

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՔԻՆ. — «Թան»ը մասնաւոր հեռագրէ մը առնելով կը հաղորդէ, որ Ռուսահայերու արշաւանք մըն է տեղի ունեցեր Վան: Թուրք զինուորները զանոնք յետ են մղած տասնի չափ սպաննուած և այդքան ալ բռնելով անոնցմէ, Թուրքերն ալ ունեցած են քանի մը սպաննուածներ:

«Թան»ի այս լուրը մեզի անհաստատի կը թուի:

— «Թայմզ»ի Կ. Պօլսոյ թղթակիցը կը հեռագրէ Մայիս 31 թուականով:

Հիւսիսային արեւելեան սահմանագլխին վրայ Ռուսիոյ զինուորական շարժումները մեծ մտա-

տանջութիւն կը պատճառեն հոս: — «Թայմզ»ի Պերլինի թղթակիցը կը հեռագրէ Յունիս 1 թուականով:

Սօֆիայէ և Սելանիկէ առնուած անգլիկութիւնները կը հաստատեն թէ շուրջ 30 հոգիէ բաղկացած Պուլկարական Հրոսակախումբ մը փորձեր է՝ Տուպիւնայի մօտ թրքական սահմանագլխէն ներս մտնել: Օսմ. սահմանապահ զինուորները զանոնք հալածելու ու ցրուելու են մեծ կորուստ պատճառելով: Թուրք իշխանութիւնք նորէն մասնաւոր հրահանգներ ստացան ամէն կարելի միջոց ի գործ դնելու՝ բարեկարգութեան պահպանման համար:

Կիւլօճէ. — Յունական լիբերթուրը ըսելով Եօրկիոս իշխանի դէմ կազմուած դաւադրութիւն մը բացուել է: Շատ մը մահմետականներ, որ կը զիտուին իբր զրդոզներ, արտաքսուեցան երկրէն:

### ՆԱՄԱԿ ԿԱՏՈՒՓ

Երզնկայի Մրայ Մանուկեան կը յայտարարէ, որ ինք կը գրտնուի Սիլիսթրէի մէջ, Հասցէն՝ Տ. Հաճի Կարապետ Թօփազալեան, յանձնել Մրայ Մանուկեանի:

— Լին (Մաս.) Կ. Մ.ին. — Տ. Ամիրխանեանի հասցէն հետեւեալն է. Վառնա, Տ. Արքահամ Ամիրխանեան:

— Տ. Տ. Յովհաննէս Ղարիպեան և Նշան Սաղոյլուեան, ձեր բարեկամ խորհն Գալուստեանը կուզէ ձեր հասցէն: Գրեցէք իրեն հետեւեալ հասցէով. Խ. Գալուստեան, 1. Պ. Օ. Պօքս, Լօրէնս, Մասս., Միտցեալ նահանգներ:

— Սօֆիայի հայերուն. — Վաս սովորութիւն է թղթակիցներ ուրոնել և ունոնց դէմ գաւեր լարել: Կը յայտարարենք, որ ստակէ մեզի Ս. Ք. ստորագրութեամբ գրողը Տօքթօր Ս. Քիւչիկեանը չէ: Բան մը ունիք ըսելու թղթակցութեան դէմ, թերթի սրտները բաց են. պայմանով մը որ անտեղի ու անվայել հայտոյանքներ չըլլան...

### ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՆԱՐԺՈՒՄԻ

Կը ապագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրատարակիչ, մահազդ, ինչպէս նաև պրօշիւններ:

Գինները յոյժ գիւրամատչելի: Աւրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԵՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна